6699

059
д-21

059
Ժ-Յ1 Վ.

ՀԱՅԵՐԷՆ

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

# ՕՐԱՑՈՅՑ

1918 Թւականի

Թիֆլիս, տպ. «ԱՐՓԻ»

# ՅՈՒՆՎԱՐ

բշ. Ծննդի պաս: Տարեմուտ և կա-
…անդ: 1895 Գիւրենկիկի հայոց ջարդը:
2 գշ. Ծննդի պաս:
… դշ. Ծննդի պաս:
… հշ. Ծննդի պաս:
…ուր. Ճրագալոյց — Նաւակատիք:
… Ծնունդն Մկրտութ. Քրիստոսի:
…ր. Յիշատակ մեռելոց:
…րկուշաբթի:
…շ. 1905 Պետրոգրադի բանւորնե-
…թափորը, որը Թագաւորի մօտ էր
… աշխատաւորի կարիքները մա-
…նդրելու, հրացանի բռնեց Ձմե-
…պալատի առաջ, սպանեց մօտ
…0 հոգի:
…0 դշ. 11 եշ. 12 ուրբաթ:
…3 շբ. տօն անւանակոչութ. Տեառն:
…4 կիրակի:
… բշ. 1906 Ջօրջիաշվիլին ռմբայով
սպանեց գեներալ Գրեազնովին Թիֆլ.:

16 դշ. 1906 Սպիրիդոնովան սպանում է տիրան Լուժանովսկուն։

17 դշ. պաս։ 1916 Խնուսի առումը։

18 եշ. 19 ուր. պաս։ 20 շբ.

21 կիր. 22 բշ. 23 գշ. Վահան Գողթն

24 դշ. պաս։ 1878 Վէրա Զասուլիչը վիրաւորում է Պետրօգրադի ոստիկանապետ Տրեպօվին։ 25 եշ.

26 ուրբաթ, պաս։ 1885 Շլիսելբուրգի բերդում հրացանազարկ են անում յեղափոխական Ի. Ն. Մըիշկինին։ 1914 Մեծ պետութիւնների վճիռը Հայաստանի բարենորոգումների վերաբերեալ։

27 շբ. 28 կիրակի, 1906 Վարշաւայում կախում են չորս յեղափոխականի Բարդովսկու, Կունիցկու և այլոց։

29 բշ. 30 գշ. 31 դշ. պաս։



## ՓԵՏՐՒԱՐ

1 եշ. 2 ուր. պաս։ 3 շբ. Գրիգոր Լուսաւորչի որդոց և թոռների։

4 կիրակի, 1905 Կալեաեվը բօմբայով սպանում է Սերգէյ Ալէքսանդրովիչին։

5 բշ. 1880 Ձմրան պալատի պայթումը հիւսն Խալտուրինի դրած մինայով։

6 գշ. 1905 հայ-թուրքական կոտորածները Բաքւում մինչև ամսի 9-ը։ 1916 Մուշի և Խլաթի առումը։

7 դշ. պաս։ 8 եշ. 9 ուրբաթ, պաս 1882 «Ժողովրդի կամք» կուսակցութեան 20 անդամների դատը, մի քանիսը մահւան, ոմանք տաժանակիր աշխատանքի դատապարտւեցան, ազատւեց մատնիչ յեղափոխ. Մերկուլովը։

10 շաբաթ ս. Թադէոսի և Սանդուխտ կուսի։ 11 կիրակի, բարեկենդան Առաջաւորների պասի։ 12 բշ. պաս։ 13 գշ. պաս։ 14 դշ. պաս, Տեառնընդառաջ։ 15 եշ. պաս։

16 ուր. պաս։ 1884 հրովարտակ հայոց դպրոցների փակման մասին։

17 շբ. Սարգիս զօրավարի յիշատակը։

18 կիր. 1905 Պետական Դումա հրաւիրելու հրովարտակի հրատարակումը։

19 բշ. ս. Ատովմեանք։ 1861 ճորտութեան վերացումը։ 1878 Սան-Ստեփանոյի դաշինքը, որի 16-րդ յօդուածը վերաբերում է Հայաստանին։ 1916 Բիթլիսի առումը։

20 գշ. ս. Սուքիասեանք։ 1914 բացւում է Թիֆլիսում հայոց մասնաւոր խորհրդակցութիւնը, որը 22-ին ընտրում է Ազգային Բիւրօ։ 21 դշ. պաս։

22 եշ. ս. Ոսկեանք։

23 ուր. պաս։ 1901 Մոսկւայում ուսանողների և բանւորների ցոյցը, կազակները շատերին սպանեցին և վիրաւորեցին, բանտարկեցին մօտ հազար հոգի։ Ցոյցը վերջացաւ 27-ին։

24 շբ. ս. ՎԱՀԱՆ Գողթն. 25 կիր.





ՊՕՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Դեռ 1700 թ. սիւնեցի հայերը դիմեցին Ռուսաստանին և Իսրայէլ Օրին հայ մելիքների կողմից գնաց Ռուսիա, բայց 1711 թ. մեռաւ Աստրախանում։ Այնուհետև 1722—1728 թ. մարտնչեց ԴԱՒԻԹ-ԲԷԿԸ։

Յետոյ մեծ ոգևորութիւն սկսւեց հնդկահայերի մէջ և «Ջիք-Մովսէս»-ը սկսեց դրդել հայերին զօրք ժողովել և կռւել թշնամու դէմ։ Նրա խորհրդով և ներշնչումով գործակ Յակոբ Շամիրեանը գնեց Լօռին ու տպեց «ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՑ» օրէնսգիրքը։

Յովսէփ Դ Կաթողիկոսը հայոց թագաւորութիւնը վերակենդ. ուզեց ընդհատ։ Եկատերինէ Բ-ի մահը խոչընդոտ եղաւ։

Ներսէս Ե օգնեց ռուս զօրքի

նաձումներին, բայց ռուս բուրժուազիա-
ները նրան աքսորել տվին։

Ներսէս պատրիարքը իր ձգտումնե-
րի հետ գերեզման մտավ։

Այս բոլորը վերաբերում էր ՀԱՅԱ-
ՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ, իսկ յետոյ
եղած շարժումները մեր հայրենիքի
ինքնօրինութեան են ձգտել և օրէցօր
անթիւ զոհեր տալով արեան գնով են
ուզում գնել անկախութիւնը։

ՄԻՈՒԹԻՒՆ և ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ,

Սրանով պէտք է փրկւենք։



26 բՀ․ 27 գՀ․ ս․ ՂՆԻՈՆԴՆԵԱՆՔ։

1917 կէս գիշերին, մի քանի օրւայ
խուլ ապստամբութիւնից յետոյ, Պե-
տական Դումայում պատգամաւորների
նախաձեռնութեամբ կազմակերպւում
է Ժամանակաւոր Կառավարութիւն։
28 գՀ․ պաս։ Նախատօնակ։

## ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

Սոյն կուսակցութիւնը կազմւեց
1898 թւին, իսկ 1903 մշակւեց ծը-
րագիրը և երկփեղկւեցան երկսի՝ փո-
քրամասնականների և մեծամասնական-
ների։ Ծրագիրը բղխում է Մարկսի և
Էնգէլսի ուսուցումից՝ աշխատանքի ա-
զատութիւն, պարլամենտ մի պալատով
քաղաքական ազատութիւններ, դեմօ-
կրատիական հանրապետութիւն ևայլն։
Մեծամասնականները կօմպրօմիսների
դէմ են, պահանջում են անմիջապէս
վերջ տալ ներկայ պատերազմին։

## ՄԱՐՏ

1 եշ. Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ 1036 նահատակներ, տօն Ազգային, յիշատակ մեռելոց։ 1881 սպանւում է Ալէքսանդր Բ կայսր։

2 ուր. պաս։ Նիկօլայ Բ հրաժ. գահից։

3 շբ. 1872 40 հոգի վոնեցիներ հիմնում են «Միութիւն ի փրկութիւն» ընկերութիւնը Թիւրքիոյ լծից ազատելու միջոցներ որոնելու համար։

4 կիրակի, բուն-բարեկենդան։

5 բշ. առաջին օր մեծ պասի։

6 գշ. պ. 1906 Բերեզան կղզու վրա հրացանազարկ են անում լէյտենանտ Շմիդտին և նաւաստիներ Չաստնիկին, Անտօնենկօին և Գլադ-կօվին, որոնք կազմակերպեցին Սևաստապօլի ապստամբութիւնը։ 1917 Ժամ. Կառավարութեան մանիֆեստը ազատութ. մասին։

7 դշ. 1917 Թիֆլիսում կազմւում է հայոց Միջկուսակցական Խորհուրդը։

8 եշ. 9 ուրբաթ։ Գարնանամուտ։

0 շբ. 1877 50 յեղափոխակ. դատը։

1 կիր. սպանւում է Պաւէլ I կայսր։

836 հայոց եկեղեցու իրաւունքների ոտնատումը «Պօլօժէնիէի» հրատարակումը։ 12 բշ. 13 գշ. 1866 Մ. Նալբանդեանի մահը։ 14 դշ. 15 եշ.

16 ուր. 1885 Մկրտիչ Փորթուգալեանը վտարանդւում է Վանից և Մարսէլում հիմնում է «Արմէնիա» թերթը, բրև օրգան յեղափ. արմէնականների։

17 շբ. 18 Գ. կիրակի մեծ պասի։

19 բշ. 1882 կախւում են Սուխանովին

20 գշ. 21 դշ.

22 եշ. 1882 կախւում են Խալտուրինին և Ժելվակովին։ 23 ուրբաթ։

24 շբ. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ տօն։

25 կիր. 26 բշ. 1898 հայոց դպրոցների կալուածների գրաւումը։ 27 գշ.

28 դշ. Միջինք։ 29 եշ. 30 ուր.

31 շբ. 1904 Անդրանիկի և իր խմբի քաջութիւնները Սասունում, Բիթլիսում։

## ԱՊՐԻԼ

1 կիրակի մեծ պաս։

2 բշ. 1848 անհետանում է Խաչատուր Աբովյանը։ 1879 մահափորձ Ալեքսանդր Բ-ի կյանքի դեմ ուս. Սոլովևի ձեռքով։

3 գշ. 1881 մահապատիժ յեղափոխակ. Ժելյաբովի. Ռըիսակովի, Կիբալչիչի, Միխայլովի և Սոֆիա Պերովսկայայի։ 1915 խմբապետ Իշխանի մահը։

4 դշ. 1866 Կարակոզովի մահափորձը Ալեքսանդր Բ-ի կյանքի դեմ։ 1916 Տրապիզոնի առումը։ 5 եշ. 6 ուր. 7 շբ. Ավետում ս. Աստվածածնի։ 8 կիր.

9 բշ. 10 գշ. 11 դշ. 12 եշ. 13 ուր. 14 շբ. 15 կիր. Ծաղկազարդ։ 1905 Արարատյան գունդը արշավում է դեպի Վան։ 16 ավագ բշ. 17 ավագ գշ.

18 ավագ դշ. 1861 Ռուսաստանի զանազան տեղերում գյուղացիների ջարդը հողի պահանջի պատճառով։ 19 ավագ եշ. Ոտնալուայ։ 20 ավագ ուրբաթ։



21 ավ. շբ. Ճրագալույց, Նավակատիք։

22 կիր. ԶԱՏԻԿ Հարություն Քրիստոսի։ 1849 Պետրոգրադում տաժանակիր աշխատանքի են դատապարտում 29 հոգի, որոնք հավաքվում էին և գրքեր կարդում ճորտության մասին։

23 բշ. Ցիշատակ մեռելոց։ 24 գշ. 25 դշ. 26 եշ. 27 ուրբաթ, 1906 բացվում է Առաջին Պետական Դուման։

28 շբ. 29 կւր. Կրկնազատիկ, առաջին պսակ (սա եկեղեցական սխալ է։)

30 բշ. Ապրիլ ամսին Բուլղարիայի Սոֆիա քաղաքում ռումբեր պատրաստելիս սպանվում է Դաշնակցության հիմնադիր Քրիստափոր Միքայելյանը։

### Սոցիալ-յեղափոխականներ

Սույն կուսակցությունը կազմվեց 1900 թվին, ծրագիրն է մի պալատով պառլամենտ, հողի սոցիալիզացիա, քաղաքական ազատությունները և այլն։

## ՄԱՅԻՍ

1 գշ. համա-բանւորական տօն։
2 դշ. 3 եշ. 4 ուր. 5 շաբաթ.
6 կիր. 1915 կամաւորները գրաւում
են Վանը. 1917 կազմւում է առաջին
կօալիցիօն (միացեալ) մինիստրութիւն
7 բշ. 8 գշ. 1887 Ալէքսանդր Գ-ի
դէմ մահափորձ անող Գեներալովի և
ընկերների մահապատիժը։ 9 դշ.
10 եշ. 1905 մահապատիժ Կալեաևի,
որ սպանեց մեծ իշխան Սերգիին. 1906
հրատարակւում է կոնդակ Կեդրոնական
ժողով հրաւիրելու Էջմիածնում. 1916
Պետրոգրադում Հայոց Համագումարը։
11 ուր. 1895 պետութիւնները ներ-
կայացնում են Թիւրքիային Հայաստա-
նի բարենորոգութեանց ծրագիրը. 1905
ռումբայով սպանւում է հայ-թուրքական
կոտորածների հեղինակներից մէկը՝ իշ.
Նակաշիձէն Բագւում։ 12 շբ. 1905
Հին-Նախիջևանի թուրքերը յարձակ-
ւում են հայերի վրայ։ 13 կիրակի.
14 բշ. 1879 Կիևում կախում են Օ-
սինսկի, Անտօնով և Բրանդնէր յեղ-ի.
15 գշ. 1916 Ռևանդուզում ընկնում է
խմբապետ Քեռին։ 16 դշ. 17 եշ.
1827 երկու հազար հայ կամաւորների
գունդը Թիֆլիսից մեկնում է պարսից
դէմ։ 18 ուր. 19 շբ. 20 կիրակի,
տօն Երևման ս. Խաչի։ 21 բշ. 22 գշ.
23 դշ. 1905 Երևանի հայ-թուրքական
ընդհարումը. 24 եշ. 1860 Թիւրքա-
հայոց Սահմանադրութեան հաստատումը
25 ուր. 26 շբ. 27 կիր. 28 բշ.
1879 կառում են ուսանող Սօլօվևին
(տես 2 ապրիլ)։ 29 գշ. 30 դշ.
31 եշ. Համբարձումն Քրիստոսի։

### Հող և Կամք կուսակցութիւնը

1876 թւին հիմնւեց ժողովրդին սօ-
ցիալական յեղափոխութիւն քարոզելու
համար. որանցից ծագեց Սև պերեդէլ և
Ժողովրդական Կամք կուսակցութիւնը։

## ՅՈՒՆԻՍ

1 ուր. 2 շբ. 1915 Կ. Պոլսում կախում են Սասունի հերոս Մուրադին, Փարամազ, Գագիկ և այլ ընկերների հետ

3 կկր. 4 բշ. 1896 Վանում հայ յեղափոխականները կազմում են յեղափոխական կառավարութիւն, որ տևեց ց12 յունիսի։ 5 գշ. 6 դշ. 7 եշ. 1906 Սեւաստապօլի զինւ. ապստամբութիւնը

8 ուր. 9 շբ. 10 կիր. Հոգեգալուստ

11 բշ. (այս շաբըթը չինծու պաս է)։

12 գշ. 1903 հայոց եկեղեցական կալուածների գրաւման հրովարտակը։

13 դշ. 1862 հրովարտակ կիրակնօեայ դպրոցների փակման մասին։ 14 եշ.

15 ուր. 16 1900 Հայոց հրատակչական ընկերութեան փակումը։ 17 կիր.

18 բշ. ս. Հռիփսիմեանց կոյսերի։

19 գշ. ս. տօն Գայանեանց կոյսերի

20 դշ. պաս։ 21 եշ. 22 ուր. պաս

23 շբ. ս. ԳՐԻԳՈՐ Լուսաւորչի ելն ի



Վիրապէն. 1896 Վասպուրականում ընկնում է Մարտիկն իր ընկերներով։

24 կիր. տօն Կաթողիկէ ս. Էջմիածնի

25 բշ. 26 գշ. 27 դշ. պաս։

28 դշ. Սահակ և Յովսէփ իշխանների յիշատակը։ 29 ուրբաթ, պաս։

30 շբ. ս. ՆԵՐՍԷՍ Մեծ հայրապետի։

## ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Յեղափոխական հայ կուսացութիւն, հիմնուած 1890 թւին Քրիստափոր Միքայէլեանի ջանքով, ազգային ծրագրով, բայց 1907-ին ընդունեց սօցիալիզմը։ Ծրագիրն է քաղաքական ազատութիւնները, ֆեդերատիւ հասարակապետութիւն, Հայաստանի ինքնավարութիւն, հողի սօցիալիզացիա և այլն։

### Ժողովրդական-Սօցիալիստներ

Նարօդնիկներ, 1906-ին հեռացան սօց. յեղափոխականներից, ծրագիրն է միպալատ, հողի ազգայնացում և այլն։

## ՅՈՒԼԻՍ

1 կիր. բարեկենդան ս. Լուսաւորչի պասի. 2 բշ. պաս: 3 գշ. պաս.
4 դշ. պաս. 1905 սպառ. Բագւի փոխ նահանգապետ Անդրէևին: 5 եշ. պաս
6 ուր. պաս. Նախատօնակ:
7 շբ. գիւտ նշխարաց ս. ԳՐԻԳՈՐ Լուսաւորչի: 8 կիր. 1906 արձակւում է առաջին Պետական Դուման:
9 բշ. 10 գշ. 1906 Վիբօրգի կոչը.
11 դշ. պաս, Նախատօնակ. 1908 Թիւրքիայի սահմանադրութեան հռչակումը
12 եշ. ս. Թարգմանիչներ Սահակի և Մեսրոպի. 1916 Երզնկայի առումն.
13 ուր. պաս, 1826 Դէկաբրիստների մահապատիժը: 14 շբ. յիշատակ Տրդատի Աշխէնի և Խոսրովադխտի:
15 կիր. 1890 Հնչակեանների ցոյցը Կ. Պոլսում, 1904 սպանւում է մինիստր Պլէվէն. 16 բշ. 17 գշ. 18 դշ. պաս
19 եշ. 1914 Գերման-Ռուս պատերազմի սկիզբը: 20 ուր. 21 շաբաթ:



22 կիր. բարեկենդան Վարդ. պասի:
23 բշ. պաս. 24 գշ. պաս. 25 դշ. պաս, 1896 Խանասորի ճակատամարտը
26 եշ. պաս: 27 ուր. պաս:
28 շբ. Նաւակատիկ: 29 կիր. Վարդավառ: 30 բշ. Յիշատակ մեռելոց:
31 գշ. 1894 ամբողջ ամսի ընթացքում Սասունի սարսափելի կոտորածը.

## ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐ

Այս կուսակցութիւնը գործում է 1887 թւից, ծրագիրը սօցիալ դէմօկրատական է, աւտօնօմ Հայաստան:

### Արմենականներ

Նախահայր հայ կուսակցութիւնների, հիմնադիրն է «Արմենիա» թերթի խմբագիր Մկրտիչ Փորթուգալեանը, ըսկիզբը առան Վանում և անցան Մարսէյլ և այժմ մէկ թերթը գոյութիւն ունի, բայց կուսակցութիւնը ոչ. սկիզբ է առել 1878 թւականից յետոյ:

## ՕԳՈՍՏՈՍ

1 դշ. պաս, 1905 հրովարտակ հայոց եկեղ.-դպրոց. կալուածների ետ տալու մասին։ 2 դշ. 1862 Զէյթունցիք ջարդում են օսմանցիներին։ 3 ուր. պաս

4 շբ. 1904 հայերը ջարդում են թիւրքերին Բիթլիսի փողոցներում։

5 կիր. Բարեկենդան ս. Աստուածածնի պասի, 1902 հրաման թիւրքահայերին Ռուսաստանից արտաքսելու մասին։

6 բշ. պաս։ 7 գշ. պաս, 1907 Կաթողիկոսի պատգամաւորները հասնում են Հաագա և բողոքում թիւրքահայոց անտանելի դրութեան մասին։

8 դշ. պաս։ 9 եշ. պաս։ 10 ուր. պաս։

11 շբ. տօն Շողակաթի ս. Էջմիածնի, Նաւակատիք, հայոց Ամանօր, ՌՅԾԴ։

12 կիր. Վերափոխումն ս. Աստուածածնի։ Խաղողօրհնէք։ 13 բշ. յիշ. մեռել.։

14 գշ. Դաշնակցականները գրաւում են Բանկ-Օտտոմանը։ 15 դշ. 16 եշ.



1906 բացւում է Կեդրոնական Ժողովը Էջմիածնում։ 17 ուր. 18 շբ. 19 կիր. 20 բշ. 21 գշ. 22 դշ. 23 եշ. 24 ուր. 25 շբ. 26 կիր. 27 բշ. 1917 գեն. Կօրնիլովի արշաւանքը դէպի Պետրօգրադը։ 28 գշ. 29 դշ. պաս։ 30 եշ. 31 ուր. պաս։

### Սահմանադիր-Դէմօկրատներ

Քաղաքական ազատամիտ կուս. Կադէտներ, գործում են 1905 թուից իբրև սահմանադրականներ, 1917-ից դարձան հանրապետական և Ժողովրդի Ազատութեան կուս. անուանեցան։

### Հոկտեմբերեաններ

Սոյն կուս. սկսեց գործել 17 հոկտեմբերի 1905 թւի։ Ծրագիրը նման է կադէտականին։ Ընդունում են Ռուսաստանում բնակւող ազգութիւնների ինքնորոշումը։ Կուսակցութեան լիդէրն է նախ. մինիստր Գուչկովը։

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

1 շբ. 1905 Բագւի հայ-թուրքական Բ ընդհարումը։ 2 կիր. 3 բշ. 4 գշ.
5 դշ. պաս։ 6 եշ. 7 ուր. պաս։
8 շբ. Ծնունդ ս. Աստուածածնի։ 9 կիր. բար. Խաչի պասի։ 10 բշ։ պաս։ 11 գշ. պառ։ 12 դշ. պաս։ 13 եշ. պաս։ 14 ուր. պաս։ 15 շբ. տօն ս. Եկեղեցու։
16 կիր. Խաչվերաց։ 17 բշ. յիշ. մեռ.
18 գշ. 1877 193 յեղափոխականների դատը։ 19 դշ. պ։ 20 եշ. 21 ուր. պաս։
22 շբ. 23 կիր. բար. Վարագի խաչի
24 բշ. պաս։ 25 գշ. ս. Շուշանիկի։
26 դշ. աաս։ 27 եշ. պաս։ 28 ուր. պ։
29 շբ. անուանակոչութիւն Վեհափառ ԳԷՈՐԳ Ե Կաթողիկոսի (ս. Գէորգ)։
30 կիր. տօն Վարագի Խաչի։ 1895 Կ. Պօլսի հայերի ջարդը։

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

1 բշ. Դաւիթ Դվինեցու 2 գշ. 3 դշ. պ։
4 եշ. Սահակ և Համազասպ իշխաններ։ 1895 Տրապիզոնի հայոց ջարդը։
5 ուր. պաս։ 6 շբ. 1895 Էրզրումի հայոց ջարդը։ 7 կիր. 8 բշ. 9 գշ.
10 դշ. 11 եշ. 1909 սպան. Ե. Թոփչեանը Բաբերդի մօտ։ 12 ուր. պաս։
13 շբ. ս. Թարգմանիչների՝ Մեսրոպի Եղիշէի, Մովսէս Քերթողի, Դաւիթ անյաղթի, Գրիգոր Նարեկացու և Ներսէս Կլաեցու։ 14 կիր. 1913 մահ Սիմէօն Զաւարեանի Կ. Պօլսում։ 1895 Քղիի հայոց ջարդը։ 15 բշ. 16 գշ. 1895 Հաճընի հայոց ջարդը։ 1914 թիւրքերը ռմբակոծում են Սև Ծովի ափերը։
17 դշ. 1905 ազատութիւնների մանիֆէստը ընդհանուր գործադուլից հետո
18 եշ. 1903 հայոց Կաթողիկոսի իրաւունքների ոտնահարումը ցարիզմից
19 ուր. պաս։ 20 շբ. աւետարանիչ-

ների՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի և Յովհաննու։ 1895 Մարաշի հայոց ջ.
21 կիր. 1895 Երզնկայի հայոց ջարդը
22 բշ. 23 գշ. 1914 Անդրանիկն իր գնդով մեկնում է Հին-Ջուղայից Խոյ։
24 դշ պաս։ 25 եշ. 1917 Բոլշևիկների խռովութիւնները և Պետրօգրադի գրաւումը։ 26 ուր պաս։ 27 շբ.
28 կիր. Գիւտ Խաչ։ 29 բշ. 1917 բացւում է Ռուսահայերի Համախորհուրդը Թիֆլիսում, որը ընտրում է ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ 12 հոգուց։
30 գշ. 31 դշ. պաս, 1895 Ատանայի և Մերսինի հայերի ջարդերը։

Հայ-Ժողովրդական կուս.

Սկսեալ 1917 Թուից, ծրագիրը մօտ է կադէտներին, են Հայաստանի ինքնօրինութիւնը։ Կադէտների հետ ոչ մի կապ չունեն։

---

## ՆՈՅԵՄԲԵՐ

1 եշ. 1866 անյայտանում է հեղինակ-ուսուցիչ ազգասէր Գէորգ Աբովեանը։
2 ուր. պաս։ 3 շբ. 4 կիր. 5 բշ.
6 գշ. 7 դշ. պաս։ 8 եշ. 9 ուր. պ.։
10 շբ. 1895 Խարբերդի հայոց ջարդը
11 կիր. 12 1917 սկսւում են Սահմ. Ժողովի ընտրութիւնները։ 13 գշ. 1917 փակւում է հայոց Համախորհուրդը։ Կազմւում է Անդրկովկասեան Կոմիսսարիատը։ 14 դշ. պաս։ 15 եշ. 16 ուր. պաս։ 18 կիր. 19 բշ. 20 գշ. 21 դշ. պաս, Ընծայումն ս. Աստուածածնի տաճարին։ 22 եշ. 23 ուր 1905 Թիֆլիսի հայ-թուրք. ընդհարումը։ 24 շբ. 25 կիր
26 բշ. 27 գշ. 28 դշ. պաս, 1917 անգլիացիք վերցնում են Երուսաղէմը։
29 եշ. 1393 ԼԵՒՈՆ Զ-ի մահը։
30 ուր. պաս, Նախատօնակ։ 1917 բոլշևիկները ցրւում են Սահմանադիր Ժողովը (սկզբնական նիստը)։

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

1 շբ. ա. լուսաւորիչների Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալների: 2 կիր. 1917 Զինադադար Արևմտեան ճակատում: 3 բշ. Սվազի հայոց ջարդը: 4 գշ. հայոց Աբգար թագաւորի 5 դշ. պաս: 1917 Զինադադար Կովկասեան ճակատում: 6 եշ. 7 ուրբ. պաս: 1895 Սամսոնի հայոց ջարդը: 8 շբ. 9 կիր. Ձմեռնամուտ: 10 բշ. 11 գշ. 12 դշ. պաս: 13 եշ. 14 ուր. 1825 Նիկոլայ Ա գահը բարձրանալու օրը զօրքի ապստամբութիւնը ղեկավարութեամբ Դէկաբրիստների: 1895 Տարսոնի հայոց ջարդը: 15 շբ. 1917 Ազգային Խորհրդի կոչը հայերին ռազմաբեմի մասին: 16 կիր. 17 բշ. Սպանութիւն թագուհու տարփածու Ռասպուտինի: Գումարւում է Թիւրքահայ զինւոր. խորհուրդը Թիֆլիսում: 18 գշ. 19 դշ. պաս: Նոր տոմար 1-ն Յունվ.:



20 եշ. 1917 հրատ. հողային դէկրէտը 21 ուր. պաս: 22 շբ. 23 կիր. 24 բշ. 25 գշ. 26 դշ. պաս: 27 եշ 28 ուր. պաս: 29 շբ. 30 կիր. Ծննդի պասը: 31 բշ. Ծննդի պասը:

### Ազգային կուսակցութիւն

Նախկին պահպանողականներ, որոնք թէպէտ չեն ունեցել կոնֆերենցիա, բայց 1905 թւից համախմբւած են և ունեցել են թերթեր՝ «Հովիտ» «Խարազան»: Ծրագիրը՝ Հայաստանի անկախութիւն, քաղաք. ազատութիւններ և վերածնւած եկեղեցի Կաթողիկոսով: Հողի սեփականատէրերից պէտք է գնել պետական հաշւով հողը և տալ գիւղացուն: Մօտերը լինելու է ժողով և կը տպւի կուսակցութեան ծրագիրը:

## Մեր ասելիքը

Սոյն օրացոյցից մենք ջնջեցինք բոլոր չինծու սրբերին, որոնք ոչ մի կապ չունեն հայոց եկեղեցու հետ։ Թողեցինք Ազգային և եկեղեցու այն տօները, որոնք ճիշտ որ յարգի են մեր մէջ։ Դեռ պէտք է աւելին ասենք որ մենք մօտերս լոյս ենք ընծայելու մի գրքոյկ եկեղեցու ռէֆօրմների մասին և այդ ուղիով էլ մարտնչելու ենք մինչև որ յեղաշրջենք։ Գործի գլուխ է կանգնելու Ազգային կուսակցութիւնը, ուր ժամ. հասցէն է՝ Թիֆլիս, Գանասեիչա փողոց, №1, (երեկոյեան 4—5 ժամին, բնակարան Հայկ Տէր-Աստուածատրեանցի)։ Շուտով կլինի և սեփական օրգան։

ԽՄԲ.



Գինն է 35 կոպէկ։

Դիմել՝ Կովկաս. Գրախանութին։

6699

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0032269